

ՄԱՅԿ

Հարկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:

Ինքնուրույն գրվում են միմյանի նմանությամբ մեջ:

Օտարաբար զգացրեք դիմում են ուղղակի
Тыфлис. Редакция „Мусако“

ԲԱՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը, — և երբին
տեսնված են, — նամակ խմբագրին: Ներքին լու-
րեր: — Արտաքին տեսնված են, — և երբին
կոչվին: Նամակ Գերմանիայից: Արտաքին լուրեր:
«Մշակի» հեռագրերը: — Յայտարարություններ:
«Յեղեկացուց» — Բանասիրական: Վարդիկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Իսկողությունները Բերլինից
վերադարձան իրանց հայրենիքը և
այժմ ամենքը նրանցից իրանց
կառավարութեանը հաշի են տա-
լիս այն ընթացքի մասին, որ
իրանք բռնել են կոնգրեսում:

Մենքից փառաւոր ընդունե-
լով թիւն իր հայրենիքում գտաւ
անգլիական առաջին մինիստրը:
Երկու տարվայ ընթացքում
գործադրած քաղաքականութիւնը
լորդ Բիկոնսֆիլդ ծածկեց յաղ-
թութեամբ: Այդ էր պատճառը,
որ 618 յուլիսին, յորդերի նիստի
ժամանակ ներկայացնելով պար-
լամենտին կոնգրեսի պրոտոկոլը և
պաշտպանելով կառավարութեան,
այսինքն իր քաղաքականութիւնը,
նա կարողացաւ համարձակ ա-

ԲԱՆԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԻԿ

IV

Կարեւոր սկզբունք: Ամեն տեղ տիրել էր ա-
մառը եղանակներէն երկու երեսանին,
մինչ չըզով խեղդում մին ցրտով, մին տաք
փայլով: Դեռ հով... Եւսին, յուլիս, օգոստոս ու-
ստիցական տարվայ այդ երեք ամիսը որքան
լինէին սիրելի որ եւ քաղաքից վերադառնա-
լով գտնուէին իմ հին կորած ու գտնված ըն-
կերին, նոյնքան էլ օգտաբեր էին վերջինի հա-
մար:

Մենք բացի վարդիկից 3 ծառայ էլ ունէինք,
որոնց մէջ բացի Մարտիկին (*), թագաւորում էր
ձուլութիւն, սրանք իրանց վերաբերելի հոգ-
սերը զգում էին խեղճ վարդիկի վրա, բայց
մօրս միջնորդութեամբ վարդիկը ամեն բանից
ազատվեց և բացի կամի քննութեան արա-
ծանքից աւելի մեծ պարտականութիւն չու-
նէր: Իմանալով թէ ուր պէտք է քշել և որ
հանդը պէտք է տանի եղբերը եւ ու եղբայրս
զբօսանք պատճառ բերելով պաշար էինք վերց-
նում և ընկերանում վարդիկին: Այս յաճա-
խակի յրապարակութիւնը այնքան սիրելի եղաւ
եղբայրներին, որ մինչև անգամ հայրս մեր
պապայի մասին վատ գուշակութիւններ էլ էր
անում: «Ի՞նչ վերջ պէտք է խողարած դառ-
նաք» ասում էր մեզ հայրս տեսնելով սէր դէպի
սաւարարութիւններ, այն ինչ, ինչպէս ինքն էր

*) Սրան մեր տանը անուանում էին կամ
«Մարտիկ» ճգնաւոր և կամ «Մարտիկ» գիտնա-
կան իր գործած երբեմն յիմարութիւնների, եր-
բեմն խելագարութիւնների համար:

սեւ հետեւեալ խօսքերը, որ մեզ
հաղորդեց հեռագիրը՝ «Բոլոր պե-
տութիւնները, նոցա թուում և
Ռուսաստանը, համոզվեցան որ
Թիւրքիայում կարգ և հանգստու-
թիւն պահպանելու համար ամե-
նապա գրաւականները ներկայաց-
նում է միայն սուլթանի իշխա-
նութեան պահպանելը:» (Յետոյ նա
շարունակում է. «Նպզիւն կանգ-
նեցրեց Ռուսաստանի առաջա-
նալը, բայց Միսիսիում տեղ կայ
թէ Նպզիւնի համար և թէ Ռու-
սաստանի համար»:

Նպզիւնի առաջին մինիստրը
պետութիւններին համոզելուց յե-
տոյ, որ սուլթանի իշխանութեան
պահպանելը անհրաժեշտ է, յայ-
տնեց սնդուլ-թիւրքաց գաղտնի
դաշնադրութիւնը, որով Նպ-
զիւն ստանում է Կիպրոս կղզին,
ինքն իր վրա առնելով Թիւր-
քիայի միացորդի պաշտպանու-
թիւնը: Նպզիւ-թիւրքաց դաշ-
նադրութեան մասին աւելորդ
ենք համարում խօսել քանի որ
այդ դաշնադրութիւնը ամբողջա-

ստում, մանաւանդ ինձ ընտրել էր ուսումնա-
կան շինելու համար — գիտնականացու և սա էր
պատճառը, որ եղբայրս համարձակվում էր վըշ-
տացնել ինձ «Եղբայրս կամ եպիսկոպոս» անուա-
նելով: Բայց ի հարկէ հայրս սխալվում էր. մեզ
ոչ թէ տաւարարածութիւնն էր հրապուրում, այլ
ազնիւ և բարի տաւարարածը: Ընկերակցելով
վարդիկին մենք եղբերը քշում էինք մի խոտա-
ւէտ տեղ և մենք բարձր բլրակի ծայրին, ծա-
ռերի շուքում, նստած խօսում էինք — զրիցներ
անում: Վարդիկը իմ աշակերտն էր և ցոյց էր
տալիս մեծ հմտութիւն: Ես խօսում էի նրա
հետ իմ գիտեցածներէս. բայց ես էլ այն ժա-
մանակ շատ բան չէր գիտէի. և զիտեցածս աւելի
չէր անցնում որքան այնչափ որ պահանջել էր
միջնակարգ մի ուսումնարանի պատրաստակա-
ն դասատան աշակերտից, և սրա հետ էլ, աւել-
ցուցով, իմ գիտեցած չարականները: — Թուաբա-
նութեան չորս գործողութիւն, չարականներից
բերան արած կտորներ, վարժ ընթերցանութիւն
հայերէն և ռուսերէն, մի քիչ էլ պար, նմանից
շատ ազգասիրական դատարկ քարոզներ — սո-
րանք էին ամենը իմ լեկցիաների նիւթը, որ
աւանդում էի իմ ծառայ — աշակերտին: Փափուկ
հող ճարելով վարդիկը մեծ եռանդով դասերս
լսելուց յետոյ սկսում էր աշխատել: Բայց ես այս
միջոցում գրեթէ աւելի էի սովորում, սովորելու
ընդունակ դառնում, քան սովորեցնում: Նա ձեռ-
նափայտի ծայրով հարթ հողի վրա գրում էր.
առաջ գծեր, յետոյ տարեր և վերջապէս բառեր:
Արեւմտեղ Միտակուցալում էր կենսի վերջին
ողբերգական րօպէին այնպէս գուցէ եռանդով
պարագած չէր իր խնդիրը լուծելու, որքան և
իմ աշակերտը իր համար բառակազմութեան
մէջ... Թուաբանութիւնը նոյնպէս զբաղեցուցիւ
էր նրա համար:

«Ապա, վարժապետ ջան, ասում էր նա ինձ.
մի խնդիր առաջարկիր և լուծիմ իսկոյն»:
— Միթէ. կատակով ընդհատում էի ես:

պէս տպվեցաւ «Մշակի» № 117
և 118, այսքանը միայն կասենք,
որ ամբողջ Լեւոսայում կոնգրեսի
վճիռները, Սան-Ստեֆանոսի դաշ-
նագրի յօդուածների փոփոխելը և
միւս վճիռները այնքան աղմուկ
չը հանեցին, ինչքան այդ դաշ-
նադրութիւնը:

Պետութիւնները զանազան կեր-
պով վերաբերվեցին այդ դաշնա-
դրութեանը. օրինակ Ֆրանսիան
և Իտալիան բաց յայտնեցին ի-
րանց անբաւականութիւնը, այն-
պէս որ լրագիրներից մի քանիսը
համոզված էին, որ այդ պետու-
թիւնները կարող են մինչև ան-
գամ չը ստորագրել կոնգրեսի պրո-
տոկոլը, իսկ Լեւոսիա և Գերմա-
նիա չենձու սառնասրտութեամբ
նայեցին լորդ Բիկոնսֆիլդի ստեղ-
ծած նոր դրութեան վրա:

Լորդ Բիկոնսֆիլդ ճշմարիտ է
յաղթութեամբ պսակեց իր քա-
ղաքականութիւնը, բայց այդ յաղ-
թութիւնը նրան էժան չը նստեց:
Այժմ Նպզիւն գրեթէ միւս պե-
տութիւններից առաջնացած է:

«Երկու թէ» պատասխանում էր նա լրջմտօրէն:
— Դէ, պատասխովի:
Եւ նա սկսում էր տրամբողքացնելով իր մեծ
մահակը բռնել մատիտի նման երկու մատի մէջ
և սպասում:

— Դրեմ. արեմք. — դու ունես 1855 րուբլ...
«Այ. էդ է՛նչ չուտ հաղարների տէր ես չի-
նում, ընդհատում էր աշակերտս. «չէ, վարժա-
պետ ջան, որքան փող քիչ ունենայ մարդ, էն-
քան քիչ կուենայ դարձ... Խնդրեմ փող ինչ
աղքատացնես...»

— Ուրեմն գրիր նորը, ընկերիս հետ վէճի մէջ
չը մտնելու մտքով ես փոխում էի խնդիրը ընդ-
դէմ մանկավարժական դիւցիլլիայի, որին
տեղեակ էի այդ միջոցում և կարծում էի որ
շատ էլ լաւ եմ անում կատարելով աշակերտիս
ցանկութիւնը առանց պ. պ. մանկավարժների
պէս բռնանալու և աշակերտիս ստրուկ շինե-
լու... — Գրիր, ասում էի ես. ունեն 9020 ձու,
որոնցից 51 հատ ոչնչացաւ, լակ դուրս եկաւ իսկ
մնացածը թիւսի տակ գրին, որքան հաւ կուեն-
նան:

Իսկութեամբ կրկնելով խնդիրը նա ասում էր.
«41 լակ ձու հանելով 9020 ձուից կը մնայ
8969, որոնց ամեն մէկից մի ձագ դուրս գալով
կը մեծանան և կը լինեն 8969 հաւ: Բայց որ-
քան բարի ես աւելացնում էր նա երբեմն. «Ինձ
ամօթապար չանելու համար միշտ հնչող խոն-
դիրներ ես տալիս...» Թուաբանութիւնից յետոյ
մէջ էր մտնում երբեմն հայրենասիրութեան,
երբեմն կրօնագիտութեան վրա մի հարց և մի
երկար խօսուածք:

«Ինչով կարելի է հաստատել, որ վերջին
անգամ մարդ մեռնելուց յետոյ պէտք է նորից
յարութիւն առնի...» հարց էր անում բաւական-
նին համարձակված աշակերտս:

— Մի շօշափելի և անսխալ պարբերական
օրէնք արդէն անխափա կատարվելով և կրկն-
վելով մեզ հաւատացնում է թէ երբ որ ծնունդ

Նպզիւնում մինչև անգամ յայտնի
քաղաքական ընդունակութիւններ
ունեցող մարդիկ պախարակում են
այդ գաղտնի դաշնակցութիւնը և
Լեւոսայի խաղաղութիւնը երկա-
րատե չեն համարում: Այս կար-
ծիքը յայտնում են նոյնպէս մի
քանի եւրոպական նշանաւոր լրա-
գիրներ:

վ. 8.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԱԳԻՐՆ

6 յուլիսի

«Մշակի» 103 համարում պ. Սուրենյանցի
մեզ առաջարկած հարցերը առիթ տուին մեզ
կրկին անգամ դիմել մեր անխորժ գրչին:

Մենք հերքել ենք Գերմանիայի ժողովրդապա-
տիա կազմելը ուսումնարանի և ուսուցչի ծե-
ծելու վերաբերութեամբ, ուստի և ճշմարտու-
թիւնը պարզելու համար անուն անուն յայտնել
ենք թէ ովքեր են եղել վարժապետի ծեծողները
և ինչ դէպքում և դրանով ապացուցեցինք, որ
այդ բանում ժողովուրդը մասնակից չէ եղել:
Այսքանը պ. Ս. մեր կարծիքով անկարող է հա-
ղիացել հերքելու և իր նամակում աւելի է
պարզել որ կուսակցութիւնը վերաբերում է գի-
ղացիների այլ գործերին, որի մասին պարտք եմ
համարում այս նամակում խօսել և դատապար-
տված ճշմարտութիւնը վերականգնել: Ինչպէս
երևում է պ. Ս. իր փորձած գրով դու չէ

կայ, կայ և մահ, իսկ երբ կայ մահ — հեռաբար
պէտք է լինի և ծնունդ կամ ուրիշ խօսքով կեանք:
պատասխանում էի ես երբեմն ոգևորված և վա-
ժում էի որ աշխարհիս մէջ առաջին աստուածա-
բանն եմ... Օրինակ, շարունակում էի ես, ցորենի
հատիկը աճում է և թողնում չափ հատիկներ,
որոնցից ամեն միւրը մեռնելով վերածնունդ են
զարնւթին...

Երեք ամսում իմ աշակերտը մեծ առաջըր-
մութիւն գործեց:

Տուն վերադառնալով վարդիկը ընդունում
էր իր պաշտօնի հոգսերը: Նա վարժում էր
տան մէջ որպէս տանու տղայ, բայց էլ հօրս
երկրկրից ամենքին «աղա» էր ասում, հօրս —
«մեծ աղա», եղբորս — «պուճուր աղա», մօրս —
«խանում» և վերջը «տիկին» երբ քիչ լուսաւոր-
վել էր. իսկ ինձ — «վարժապետ» թէ և այդ
սխալաստեցական խօսքը ես ասում էի ամեն
հոգով...

Այսպէս մեր բոլորիս սրտերը կպած էին հա-
մարեա վարդիկի ազնիւ և անարատ սրտի հետ,
որ հօրս մօտ նա ծառայ էր մենք պարոն, իսկ
իսկութեամբ միւր մարմին էր միւսներս հոգի...

Արձակուրդի ամիսները վերջացան: Սեպտեմ-
բերի սկզբում, մի օր, երբ ես պէտք է շտապէի
դէպի քաղաք ուսանելու, անպատմելի էր իմ
դրութիւնը: Տխրած և ճիւղաւորված էի վճիռ
հեռանալ վարդիկից... վերջապէս Ե... ցի պ.
Յակոբեանի հետ նստեցի երբեակի (трёхак) վրա
և հեռացայ. թէ ինչպէս, — այդ այժմ էլ չեմ
տես...

Երկրորդ իջևանը, մի քանի վերստ հեռու է,
որ և ընդունեց մեզ գիշերը օթնանելով:

Պառկած ենք. բայց ըսելով ինչ կը տանի հայ-
րական օջախից և մանաւանդ սիրելի եղբորից
բաժանված միմի... Ես մտքով էի տանում եմ
զգում ինձ, ամենքի հետ համարվում եմ: Միաս
բարով, ասում և աւելի շատ վարդիկին դիմա-
նում...

Պատկանում ինչ է հասարակութիւն ասած բառը, և ով է կարող որ և ինչ է հասարակութեան գործերը մէջ հաստատ անդամի դերը խաղալ, վերջապէս ինչ կը նշանակէ մասնաւոր կարծիք յայտնելը հասարակաց գործերի վերաբերութեամբ և ինչ կը նշանակէ խորհրդատու կամ վճռողական ձայնի իրաւունքը ունենալը: Պ. Ս. կարծում է թէ ամեն մի թափառական և բաղդախոսիչը ունի իր թափառական կեանքով ունի իրաւունքը որ-տեղ որ պատահի այնտեղ հասարակութեան ան-դամ համարվելու և ամեն տեսակ յուշմունք ձգել ժողովրդականաց մէջ թէ և նրա անձնական և նիւթական շահերը ոչինչ կապ չունենան հասա-րակութեան շահերի հետ, ահա թէ այդ մասին ինչ է գրում պ. Ս. «Տիրացու լինելը չէ վեր-կում մարդուն հասարակութեան անդամ լինե-լուց, մարդիկ մի և նոյն հասարակութեան մէջ կարող են զանազան պաշտօններ ունենալ, մինը կարող է տիրացու լինել, մինը ճողողաբեր (ըն-կեղի կոծերի) վաճառական և երրորդը որ և է նպատակին ծառայող մի մարդ և այլն, միով բա-նիւ հասարակութեան մէջ կեանք վարողը, թէ և լինի նա օտարաբանաբան, այնու ամենայնիւ հասարակաց անդամ է յիշուում և ունի իր ձայ-նը»: Պ. Ս., մեր խօսակցութիւնը յայտնի մարդ-կանց վարվողութեան դէմ է եղել: Գուք շատ բարձր մտքերի էք ձեռն մեկնում և դեռ լողալ չը սովորած կամեաւ էք ովիկանսներով անց-նել... Ձեր այդ մտքերը շատ բարձր են մեր գիւ-ղացիների հակադրողութեան մակերևոյթից, բայց և այնպէս մենք կարծում ենք որ ամենայն ոք կարող է համարվել ընդհանուր մարդկութեան անդամ,—այդ ուղիղ է և ամենայն ոք դրականա-կան ասպարէզի մէջ ուր և լինի, ունի գործելու իրաւունքը, բայց մեզանից իւրաքանչիւրի անհա-տական և խելոյիկական իրաւունքները հասա-րակական գործերում սահմանափակվում են մաս-նաւոր հասարակութեան կեանքի շրջաններով որի հետ կապված են լինում նրա սեփական անձ-նական և նիւթական շահերը: Մենք կարծում ենք, որ քանի էլ որ մարդը ազատ լինի իր կար-ծիքների մէջ,—այն էլ նախկին ժամանակի քա-ղաքական կեանքի պայմաններին—այնքան նա պահմանափակված է իր գործունէութեան մէջ իրանից օտար հասարակութեան գործերի վերա-բերութեամբ: Մենք կարծում ենք որ ամեն մի հասարակութիւն ունի իր սովորութիւնը, հաս-տատուն անդամները և կեանքի պայմանները և նա առաջ է դնում իր միջի բնակվող անդամ-ների զարգացման և քաղաքական կեանքի հորի-զոնի բարձրութեան չափով:—Տիրացուն որ մեր գիւղացի է, մենք չենք հերքել նրա հասարակու-

Ս. միջոցում ահա մէկ էլ տեսնեմ ինչանի սենեակի փակ պատուհանը մեղմութեամբ բաց-վեցաւ... Վեր թուայ իսկոյն մահակալից, ուր ճանապարհորդական օրէնքները համեմատ պառ-կել էին առանց շարքի հանելու, ուղեցիկ արթնա-ցնել գտնէին պէս խռովացող անհոգ պ. Յակո-բեանցին, բայց ինչ տեսնեմ...

—Վարդիկը վղղոմ փաթաթվեց... Այ՛, քեզ զարմանալի աշակերտ և վարժապետ... Երկուսն էլ ինչպէս մանուկներ չը գիտեմ ինչ չու երկար լաց էինք լինում: Երեք նա իր մըտ-քում էր ասում թէ էլ չենք ք տեսնել ու միմեանց, ես իմ մտքումը...

Լացը հանգստացրեց մինչև ես բաւականին այժ ունեցայ իմ աշակերտին միթիթարելու, Գրիս-տոսի ֆլեյթին հրաժարականից սկսելով բանը...

Ըստ երևոյթին կարծ, բայց յատկապէս մին չե լոյսը մենք խօսեցինք, մինչև որ դաւթում անցադաքավարի կառապանները գոռոցը և ձիա-ների տոնատարով չը հասկացրեց մեզ թէ ան-ջատման վերջին րօպէները մտնեաւ են...

Երբակի չըբերեց և զանգի ձայնը վերջին յայտարարեան են այդ տխուր րօպէները:

Չանգը կատարեց իր ազդարարութիւնը: Ար-թնեց և բնկերս, բայց ձմելով աչքերը քնաթա-թան խիտ զարմացաւ տեսնելով, առաջ երազ, յետոյ իսկութիւն, վարդիկին: «տո, դու ինչ ես չինում այստեղ»:

—Եկել եմ վարժապետի մանապարհ գցելու ասաց Վարդիկը:

Պ. Յակոբեանը զարմացաւ մի աշակերտի այդ օրինակ գգաքմունքի վրա...

«ГОВОРО!» լսվեց կառապանի անողոր ձայնը և մենք հազիւ բաժանվեցինք միմեանցից...

Երբակի անդապ սայլը արշաւեց, բայց դեռ երկար մեր աչքերը չէին կորցնում միմեանց մինչև որ ծուռ ու մուր ուղին անջատող չեղաւ երկու բարեկամները մէջ...

Թեան անդամ լինելը, այլ ասում ենք որ մի տիրացու չէ կարող հասարակութեան ձայն ու-նենալ և առաւել ևս հասարակութիւն համար-վել,—իսկ երկու կամ հինգ օրով ճողողաբերի կո-ծեր ժողովող քաղցրին, մի կամ երկու օրով ուրիշ երկող զարաբաղցին և հասարակութեան մէջ աննպատակ թափառող օտարականները չեն կարող կրել իրանց վրա հասարակութեան ան-դամի անուն այն նշանակութեամբ, որ կարողա-նան մինչև անգամ խառնվել հասարակութեան գործերում, այն էլ ձայնի իրաւունքով, ինչպէս կարծում է պ. Ս.: Այդպիսիք արդարեւ ունեն-քեփ անելու իրաւունք ուր և լինի, ինչպէս և կատարել են մեր գիւղում և քեփի ժամանակ իրար ծեծել, ի թիւս որոց և եղել է պ. Ս. Գե-տաչենի հասարակութեան ինքնակոչ անդամը: Միթէ Գետաչենի հասարակութիւնը մարդու որ կը լինել, եթէ այդ թափառական մարդկանց չըջանում քեփի ժամանակ վարժապետը ոչ թէ ծեծվէր, այլ անգամ սպանվէր:

Գետաչեն գիւղում երկու տարի է, որ Տէր-Սարգսեանցը շարունակաբար ուսուցչութեամբ է պարապում: Առաջին տարին քննութեան ժա-մանակ նա ցոյց տուեց իր աշխատութեան պտուղը: Մենք այստեղ թէ և կարող էինք, բայց հարկաւորութիւն չենք դրում հրաւիրելու այն մարդկանց և Գանձակի ուսուցչների վկայու-թիւնը, որոնք ներկայ են եղել հարցաքննութեա-նը: Քննութեանից յետոյ աշակերտներին տուել են արձակուրդ մինչև սեպտեմբեր ամիսը և հո-գաբարձութիւնը շնորհակալութեամբ է վար-ձատրել ուսուցչին, արձակ ամիսների համար էլ պարտաւորեցնելով նրան կրկին վերադառ-նալ սեպտեմբերին: Ս. յարձակուրդին հոգա-գաբարձութիւնը ուսումնարանի նիւթական մի-ջոցը մասամբ բարեփոխ համար, ուսումնա-րանը վարձով տալիս է գանձակցի մի քանա-նայի մինչև սեպտեմբեր ամիսը, այսինքն մինչև վարժապետի վերադառնալը: Քանանան մնում է երեք օր, և գտնելով իր համար աւելի էժան տուն, թողնում է ուսումնարանը և փոխվում այնտեղ—այդ պատճառով ուսումնարանը մնում է անվարձ:

Մեզանից մերիկ վերադառնում է պ. Տէր-Սարգ-սեանցը և շարունակում իր ուսուցչութեան պաշտօնը մինչև սոյն ամի յունիս ամիսը: Երբ այս տարի սկսվում են ամառային արձակուրդ-ները ի շարս այլոց և արձակվում են մեր գիւղի դպրոցի աշակերտները: Հոգաբարձութիւնը դար-ձեալ վարձատրում է Տէր-Սարգսեանցին արձակ ամիսների համար էլ միայն և ուսումնարանը արձակելուց յետոյ ինչպէս անցելու տարին, հո-

Վ

Երբ ամառանոցի չըջապատը կազմակերպում է լեռնոտ մի երկիր իր բնութեւոր հրապրչներով որոնք ծառայում են այդ կողմերի բնակիչների համար արօտատեղերի, հանգրիւ, վարելահողերի, այգիների տեղ: Բանաստեղծների հայրենիք Գող-թան—բայց շինականների կոպիտ ճաշակի դա-տապարտութեան տակ...

Ես վերադարձաւ երկրորդ արձակուրդին և ի-հարկէ վարդիկի հետ հիւր եղալ այդ նկարչական երկրին էլի 3 ամիս, բայց որքան զարգացել էր իմ աշակերտը: Նա այժմ իմ չափ գիտէր բնագի-տութիւն, կրօն, հայ պատմութիւն, թուրքաւու-թիւն, աշխարհագրութիւն, երգեցողութիւն և արդէն մեծ նեղութեամբ խօսում էր նաև ռու-սերէն ու կարդում էր յա օրինաւոր աշակերտ էր իր շփազանց ջանասիրութեամբ և գեղջկական պարզութիւններով:

Ընկերական և հասարակական կեանքի վրա ունէր որոշ գաղափար, որ դրված էր սէր և խա-ղաղութիւն կոչելով հիմքի վրա... Նա հակացել էր թէ ինքը ինչու է ապրում, որ երբեմն երկո-տանիներէջ շատերը ծերացած անգամ կենեքը —աշխարհը կարծում են աւազակաբան...

Նա խորհուրդ էր տալիս ինձ ժողովել գիւղա-ցիների մէջ տարածված բոլոր նախապաշար-մունքները, առականը, հեքիաթները, մասալա-ները, առաձները, սրախօտութիւնը, հին եր-գերը, ազգային ծէսերը, խաղերը, պարերը... «Օ՛հ, էդ ամենը գանձ ու հարստութիւններ են հայի համար, տուում էր նա. և այդ անողը փըր-կիչ և բարեբար կը լինի հայութեան...»

Նա կեանքը ինձ նուիրած յորդորում էր ժո-ղովել նոր և գործածվող գեղջկական բառերը և կաղմել, ինչպէս ինքն էր անուանում, «բարեա-ռական բառարան», որի ինչ լինելը և կարեու-րութիւնը ճարտասանական ձևով բացատրում էր մեր վարդիկը, մեր աննշան, գերեզմաններում գտնված որբը, իմ հանձարաւոր աշակերտ...

գաբարձութիւնը խոստանում է մի ծառայող առ-տիճանաւորի ուսումնարանը վարձով տալ և ստանում է երեք րուբլ կանխիկ: Պարոնի ծա-ռայութիւնը խանդավառ էր գալ մեր գիւղը: Նա գնում է մերձակայ գիւղերից մինը և յետ է ստա-նում իր կանխիկ վճարած երեք րուբլը: Այժմ ուսումնարանը մնում է առանց վարձիւ, բայց եթէ պատահի մի այլ ցանկացող, հոգաբարձու-թիւնը վարձով կը տայ:—Հոգաբարձութիւնը այդպէս է անօրինում, որ մասամբ լրացնէ դըպ-րոցի նիւթական թերութիւնը, և հասարակու-թիւնը քանի որ ունի ընտրած հոգաբարձուներ, այս կարգադրութիւնների մէջ չէ խառնվում Միթէ սա կապ ունի ուսուցչի և աշակերտների առաջադիմութեան հետ, պ. Ս. դուք ամեն բան այլակերպած էք հանդէս բերում... Եւ դուր մարդկանց անունը արատաւորում:—Գանձակի դպրոցի ծառայի չըաւորութիւնը այս ամառ արձակուրդին ուսումնարանի սենեակներից մինը ձրիաբար տուել է նրան բնակելու համար: Պ. Ս. եթէ օրանից կարգադրեցինք որ դուք լաւ վարժապետութիւն չէք արել,—Գանձակի հասա-րակութիւնը ձեր դէմը պարտիւս է կապել և ձեր չնորհչի Գանձակի դպրոցը ծառայի կա-ցարանի է փոխվել, այն ժամանակ ինչ կասէիք դուք մեզ:

Մենք ասել ենք որ ամեն գիւղերից առաջ Գետաչենի դպրոցն է հիմնվել և նրա մէջ դաս-տարակվող աշակերտները պակաս առաջադի-մութիւն չեն ցոյց տուել և չեն ցոյց տալի միւս գիւղերի աշակերտներից (համեմատութիւնը ձեռ-քից չը թողնելու համար դեռ չենք ասում Գան-ձակի դպրոցի աշակերտներից): Այս համեմա-տութիւններից միթէ կարելի է երկնագրել կամ երևակայել այն հակադրական քայլերը, որը թոյլ է տալիս ձեզ պ. Ս.: Առաջ ծանօթացե՛ք միւս գիւղերի դպրոցների աշակերտաց գիտութեան հետ, յետոյ ձեր ձեակերպված հակադրական քա-լերի համար որոշեալ չափս բռնեցե՛ք,—այն ժա-մակ կը տեսնէք ինչպէս են նրանց քայլերը և թէ որքան արդաւորցի է մեր համեմատութիւնը:

Գուք ասում էք,—հասարակութիւնը անգամ պատրաստում է խնդիր թեմական վերատեսչին ներկայացնելու և մի քանի այդպէս բաներ ստեղ-ծում: Ճշմարիտն ասեմ դա մի այնպիսի երազ է որ մենք կարգաւորեն էլ ենք սարսափում: Գուցէ կեղծ անուններով խնդիր ուղարկվի թե-մական վերատեսչին, ինչպէս ուղարկվել է մի նամակ, այդ դէպքում կը խնդրէինք թե-մական վերատեսչին ստուգել: Մեծ. թեմական վերատեսչուը եկաւ Գանձակ, երբ հասաւ նրան

«Էդ մեզ պէս աղքատների բան չէ, սիրելի ասում էի ես. էդ մեր հարուստների գործն է. բայց նրանք տոպրակները փակած հէնց գիտես մեզ պէս էդպիսի մտքեր անելու ընդունակ են...» —Այստեղ մնաւ նրանք էլ իրանց գանձն էլ, եթէ էդպէս են... հոգոք հանելով պատասխա-նում էր նա: Ո՛վ կը կարծէր թէ աննշան վար-դիկը այս օրինակ մի երեւելի ունի դուրս գար, այն վարդիկը, որ երբեմն Ասկուղաճի բիջն էր...

«Այո, վարժապետ», ասում էր նա, երբ գործը վերջացրած հանգստանում էինք մի շուքը տեղ կամ մի աղբիւրի մօտ թեք ընկած: «այո, դար-մանալի է թէ ինչպէս կեանքի սև հոսանքը սը-տեղծել է մեղանից մինին ծառայ, միւսին տէր, մինին հարուստ, միւսին աղքատ...»

—Այդ ի հարկէ զարմանալի չէ, եթէ աչքի առաջ ունենանք շատ բան:

«Բայց ոչ այն բանը որ ասում են յիմարները թէ Աստուած է ստեղծել աղքատին՝ աղքատ, ծառային՝ ծառայ, ազատին՝ ազատ, ստրուկնե-րին՝ ստրուկ... Այդ մենք ենք մեզ այդպէս ա-տեղծելով:

Եւ զարմանալիս այն է, որ շատերի որդիքը փափուկ ուտում են, փափուկ ապրում, արեւի, անձրիի երես չեն տեսնում, բայց էլի եղակեր հաւի պէս միշտ արիւն ծուռում և բժիշկների գերի լինում ամբողջ կեանքով... Վարդիկի համար ասել չէր ուղիւ: Նա համա-րեալ ամբողջ տարում մի ձեռք չորի մէջ, որ ոչ միայն չուտ չուտ չէր փոխվում, այլ և քիչ ան-

այդ սարսափելի պարտիայի լուրը: Արդարեւ մի քանիսը, որոնք թուով հասարակութեան հետ հա-մեմատելով ոչինչ են, անբաւական են եղել վար-ժապետից, բայց դրա պատճառը ոչ թէ ուսումն-արանի մէջ թոյլ տուած թերութիւնն է եղել, այլ այն որ վարժապետը խառնվելով հասարակու-թեան գործերում, որը բոլորովին չը պէտք է անէր, մի քանիսի պատուին էր կպել և ահա դրանից դրված դուրս են բերել ուսումնարա-նից իրանց երեխայքը, և այդ դուրս գնացա-ծները թուով երեք աշակերտներն են լինում, որ գանգատվում են վարժապետի դէմ: Բայց յետոյ ծնողները, երբ համոզվում են, որ իրգուր են դուրս տարել իրանց որդիքը, կրկին ուղարկում են ուսումնարան և վարժապետը զգալով իր սխա-մունքը, դադարում է հասարակաց գործերում խառնվելու: Գետոյ վարժապետը իր ուսումնա-րանից ազատ ժամերը օրսով է անցկացնում աշակերտաց հետ: Ասա կանէր նա եթէ, սկզբից էլ այդպէս էր անցկացրել իր ազատ ժամերը, քան-թէ գիւղացիների գործերում խառնվել,—այն ժա-մանակ նրա դէմ մասնաւոր տրտունջ չէր լի-նի, թէ և նոյն ուղղութեան մէջ էր մնացել ու-սումնարանում ինչպէս եղել է մինչև վերջը:

Պ. Ս., դուք մեզ բարեկամ էք համարում վարժապետին. դարձեալ սխալում էք: Բարե-կամ լինելու համար շատ պայմաններ են հար-կաւոր և հէնց այն պատճառով որ նա հասա-րակութեան գործերում խառնվեց, մենք անձնա-կան յարաբերութեամբ միմեանց պատուին գի-պանք և նա այդ դէպքում շատ անգամ է աշ-խատել թշնամանալու մեզ և իր ցանկացածին ըստ չափու կարողութեան հասել է, սակայն մենք սկանաւտես լինելով այն նեղութիւններին, որոնք կրում են փոքր ի շատէ բարձր քաղաքներում կրված մեր երիտասարդները,—գիւղական ու-սուցիչները, մեր անկիրթ գիւղացիների ձեռքից և ակնատես լինելով, որ օրական 8 ժամ մի ուսուցիչ պարապում է ամբողջ դաստան աշա-կերտների հետ ամեն առաւարտներից և բուսաց լեզուից, մենք խղճահարկում ենք մեր խղճի ա-ռաջ դատապարտելու այդպիսիներին, ուսումն անձ-նական յարաբերութեանից դրված լինելով չէինք կարող ճշմարտութիւնը չը խոստովանելու: Եթէ դուք խօսէիք վարժապետի հասարակութեան գործերի մէջ խառնվելու դէմ, մենք ոչինչ չէինք կարող ասել, այդ էլ ձեր ուղղութեանը հակա-ռակ կը լինէր:

Այսքանը բաւական համարելով սկսեցք տա-նուէրէր հարցը: Պ. Ս. կարծում է, որ մենք մեր հայրենի լեռների քամակին ապրելով չենք կա-րողացել նկատել մեր հայրենիքի կուռակցութեան

զամ սպառնի արժանատիւ սկսած այն օրից երբ մեր սպարապետին հակադաս փափուկ կեանքի մեղութիւնները, խոնաւ տեղերում բոլորովին բնութեան խնամքին յանձնված քարի պէս ամուր էր: Միմիայն տրեխներն էին, որ դուրսի հետ քսան տեղից հաղիւ թէ հօրս ուշադրութեանն էր արժանատիւ և մի լաւ նախատիւք տալուց յետոյ, որ վարդիկը չըն նրա ուտում էր, հազիւ ապա նորոգվում էին... Ոչխարի մորթուց ահա-գին դաղը անձրեկի ու արևի տակ դուրս կանգ-նած ոչ միայն ամառ ու ձմեռ նրա գլխից ան-պակաս էր լինում այլ և կատարում էր մշտական բարձի պաշտօն: Խեղճ վարդիկը գրեթե երբեմն այնպէս դնում էր այդ կոշտացած դաղակ վրա և երկար ձգվելով չոր հողի երեսին այնպիսի քաղցր ու խոր քնի մէջ էր մտնում, որին կա-րօտ են նոյն իսկ գաղաջ թուշուրի փետուրից ստեղծած փափուկ անկողնի գերիները... Արևի, անձրեկ, ձիւնի մինչև անգամ կարկուտի տակ նա մի օրից մի օր «ուֆ» չէր արել: Նրա գը-լուխը դեռ բարձի երես չէր տեսել: Կարմիր խնձորը այնքան հրապուրէլ չէր, որքան մեր վարդիկը: Նա, ինչպէս յիշել ենք առաջ էլ, յունական գծագրութեան ձիւղ տիպարն էր ներ-կայացնում, եթէ միայն արևելեան ու ու կրա-կոտ աչքերը, որպէս հայկական զուտ յաղթա-նակութեան և գթութեան նշաններ, փոքր ինչ չը չփոթէին նրա շատ բան յայտարարող դէմքը... Մի սիրտ, որ երբեմն աւելի զգում էր, քան ար-տայայտում և երբեմն աւելի արտայայտում որ-քան ստեղծել կարելի էր, մի սիրտ որ չը գիտէր չար մտածել—այդպիսի մի սիրտ զարկում էր հէնց սկզբից վարդիկի կրծքի տակ...

Ահա թէ ինչու նա իմ ընկերն էր, իմ աչա-կերտ—սրտակիցն էր,—բայց ոչ իմ ծառան:

(Կը շարունակվի)

բաժանվելու և մեզ հրաւիրում է նորից ծանօթանալ այդ պարտականութեան հետ տանուտէրի վերաբերութեամբ: Պ. Ս. այս դէպքում էլ է ցոյց տալիս իր գործին բոլորովին տեղեակ չը լինելը. ահա ինչպէս: Ամեն մի հասարակութեան մէջ որքան էլ որ նա չը լինի բազմամարդ կամ փոքրամարդ, երբ լինում է ընտրութիւն որ և է պաշտօնակատար անձի, անտարակոյս և լինում է կարծիքների տարբերութիւն. և այդպէս մեր գիւղի տանուտէրի երեքամեայ չըլանը վերջանալու վրա է լինում և այդ երեք տարեկան ընթացքում ունեցած կորուստը և կրած վնասները հասարակութիւնը զգալով ժամանակից առաջ է խնայրանօք դիմում գաւառապետին, որ նորից ընտրեն: Ժողովուրդը մասնացոյց է լինում այդ միջոցին այնպիսի մի մարդու, որի անցեալը արդարեւ չատերին է յայտնի. բայց ոչ այնպէս ինչպէս կարելի է գուշակել պ. Ս. ի նամակից: Մի քանի տարի առաջ նոյն պարտին ժողովուրդը ընտրում է տանուտէր, բայց նա չէ ընդունում, պատճառ բերելով որ վեց տարեց աւել վարել է նոյն պաշտօնը: Մի քանի ամիս շարունակ ժողովուրդը խնդրում էր նրան որ կրկին տանուտէրի պարտաւորութիւնը ընդունի, դարձեալ չէր ճանաչանում: Բայց երբ հասարակութիւնը ստանում է նրա համաձայնութիւնը էլ չէ հանգստանում իր տեղը, այնքան է աշխատում որ ընտրողութիւնը սկսվում է ժամանակից առաջ և ահա պիտոյալի միջնորդութեամբ ընտրողութեան ժամանակ 260 հոգի ընդդէմ 14-ի ընտրում են նոյն պարտին: Պրիստովը ընտրողութեան թերթը ներկայացնում է գաւառապետին, իսկ գաւառապետը առաջարկում է նախագահութիւն: Ժողովուրդը այնքան է ուրախ լինում այս հանգամանքով, որ էլ ժամանակ չէ ճանաչում. յաճախակի խնդրում է պրիստովին որ հիմից ստանայ նշանները և յանձնէ նորին: Պրիստովը անփորձ լինելով իր գործի մէջ առանց երկուստ տալու և հակառակ օրինաց կատարում է ժողովրդի խնդրը: Երբ գաւառապետը լսում է որ հիմի ժամանակը լրացած չէ և նորը դեռ չէ լինում հաստատված ու երգված, հրամայում է նշանները յանձնել կրկին հիմի, մինչև նորի հաստատվելը և ահա մի ամից աւելի է, որ նոր տանուտէրը ըստ օրինաց հաստատված լինելով իր պաշտօնի մէջ, գործ է կատարում: Տնտեսները որին գովաբանում է պ. Ս. այն անձն է, որի համար ժողովուրդը օրեր էր համարում հեռացնելու և նա է որի դէմը հասարակութիւնը ունի քանգատ առած գաւառապետին հաշիւ տալու համար: Գաւառապետը հրամայել է որ հաշիւ տայ, բայց դեռ չէ տուել. խոտանում եմ հետեւալը հաղորդել ընթերցասէր անձանց:

Տնտեսում էք հիմալ պ. Ս. որ դուք կարգալով մեր անփորձ գրչից թուած ձեր ազգանունը մեր յօդուածի մէջ, չէք կարողացել տիրել ձեր վերջովմունքին, ուստի աջ և անհակ ապշելով շատ բաների էք ձեռնամուխ եղել և այսօր ձեր փորձված գրչով աւելի անփորձ հանդիսացել: Փորձված գրչից որքան էլ գրագրութեան մէջ վարժ չը լինի չէ կարող ճանաչել երեկոյների բուն պատճառները, դրա համար այնքան պէտք չէ փորձված գրչի, որքան փորձված գլուխ: Այս պ. Ս. դուք տեսնում էք երկոյթը, իսկ պատճառները ձեզանից ստեղծում... Դա մեծ թեւութիւն է մի փորձված գրչի կողմից...

Գետալէնցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲՅՈՐԺՕՄԻՑ մեզ գրում են. «Նորին օրագնութիւն Գաբրիէլ արքեպիսկոպոսը յուլիսի 23-ին, վարդապաւի օրը, մտադիր է Բօրժօմի հայոց եկեղեցին օծել: Տօնը պէտք է կատարվի մեծ հանդիսով. եթէ ժողովուրդը շատ հաւաքվի այդ տօնին, կարելի է մեր նորակառոյց եկեղեցու մի քանի պակասութիւններն և եկեղեցու կից ուսումնարանի հիմնելու մասին հոգ տանել»:

Քանի մի չաբաթ է, որ ԹԻՖԼԻՍՈՒՄ և քաղաքի շրջակայ գիւղերում յայտնվեցաւ կենդանիների մի տեսակ հիւանդութիւն, որ սկսվում է նորանով որ կովի, կամ եզրի գլուխը և ոտները ուռչում են: Խորհուրդ ենք տալիս բնակիչներին շատ զգուշութեամբ գործ ածել կովերի կաթը կենդանիների այդ հիւանդութեան ժամանակ:

Երէկ, յուլիսի 14-ին, ԹԻՖԼԻՍԻ ոչ մի տեղական լրագիր չը ստացաւ հեռագիրներ «Միջազգային ընկերութեան»:

Այս օրերս մենք կրկին ստացանք քաղաքային փոստով մի անստորագիր նամակ, որի մէջ սպառնում են «Մշակի» խմբագրին, Կրիգոր Արծրունու, որ եթէ նա կը շարունակէ դաւաճանել իր ազգը, նրան շուտով սպանելու են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՊՐՈՍ ԿԼՁԻՆ

Կիպրոսը Միջերկրական ծովի կղզիների մէջ նշանաւոր լինելու կողմից չորրորդ կղզին է: Սիցիլիա, Սարդինիա և Կորսիկա կղզիներից յետոյ ամենամեծ նշանակութիւն ունի Կիպրոս կղզին որի տարածութիւնն է գրեթէ մէկ միլիոն հէկտար: Կիպրոսի աշխարհագրական դիրքը սքանչելի է. նա տիրում է Սիրիայի և Կիլիկիայի ծովեզոյներին, Արշակունսի մուտքին և որ ամենամեծն է, Սուէզի ջրանցքի մուտքին: Կիպրոսը ունի ծամագոյնաւոր պատերազմական առաջնակարգ մի նաւահանգստի հարկաւոր եղած ամենալաւ դիրքը: Միայն թէ պէտք է թուճբերով և ծովի յատակը փորող գործիքներով մեծացնել այժմեան նաւահանգիստը որ վնասակիցների ժամանակից սկսած, բոլորովին երեսի վրա թողված է: Հին ամրութիւնները շինված են երկրաշափ Մարտինիցոյից որ այդ հին ժամանակներում իսկաճաւ եղած էր Վօրանի սիստեմային առաջ քան թէ Վօրանի աշխարհ գալը: Եթէ այդ ամրութիւնները վերանորոգվեն, ծամագոյնաւոր կը լինի պատերազմական առաջնակարգ մի տեղ: Կիպրոսի ծովափների վրա կայ նաև Կերինիայի ամրացած փոքրիկ նաւահանգիստը որ նայում է Կիլիկիայի (Կարանիա) ծովափին, Լիւրմասիոյ հարաւարեւելեան ծովափին և Լարնակայի նաւակայքի վրա արեւելքում: Կիպրոս կղզին որ շատ բնակիչներ ունի և շատ մշակված էր հօտայեցիների, յոյների և Լուսինեանների տիրապետութեան ժամանակներ, այժմ 180,000-ի չափ միայն բնակիչ ունէ, որոնց երկու երրորդ մասը և աւելին յոյն են: Թիւրքաց ախրապետութիւնը և կառավարչական ձևը պատճառ եղան որ Կիպրոսը աղքատացաւ և գրեթէ աւերակ դառաւ: Մէսօրայի պողոտէտ դաշտերը այլ ևս չեն տալիս դեղեցիկ հունձեր, բամբակեղեններ, որոնք ժամանակով նրա հարստութիւնն էին կազմում: Չուրը պակասած է այժմ անտառների պակասելով և կառավարութեան ու բնակիչների անհոգութեամբ:

Այո առաջին անգամ չէ որ Անգլիան տիրապետում է Կիպրոս կղզուն: Նեղիպոսցիներ, պարսիկներ, հռոմէացիներ, բիւզանդացիներ և սարակինոսներ յաջորդապէս նրան տիրելուց յետոյ, 1491 թ-ին Բիւլարգոս թագաւորը որ քաղաքներ բերած գցած էին նրան այդ կողմը իր խաչակիր պատերազմի ժամանակ, քիչ օրվայ մէջ տիրեց նրան: Յետոյ այդ թագաւորը կղզին ծախեց տաճարական ասպետներին որոնք 1493 թ-ին վերադարձրին Անգլիային և Բիւլարգոս իբրեւ աւատական կալուած տուեց Գուլտօն Լուսինեանի: Հիւզ III, Անտիօքի Հէնրի իշխանի որդին, որ Լուսինեան սերունդից էր համարվում ապօրինաւոր կերպով, տիրեց Կիպրոսին: Հիւզ III-ի սերունդից էր այն իշխանը որ 1472 թ-ին ամուսնացաւ երիտասարդ Կատարինէ Կօրնարոյի հետ, որին Վենետիկի հանրապետութեան սենատը «հանրապետութեան դուստր» պատուանունը տուեց: Վերջին Լուսինեանի մահից յետոյ, Կիպրոս կղզուն տիրեց Վենետիկի հանրապետութիւնը որի ձեռքից խլեցին Թիւրքերը 1570 թ-ին:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, 16 յուլիսի

Այս օրերս ուղարկեցի ձեզ երկու բրոշյուր Ֆրանսիերէն լեզուով: Մինը հրատարակված է Կ. Պօլսի մէջ «Defense des intéréts des détenteurs de fonds ottomans en Turquie» վերնագրով և խօսում է Թիւրքիայի պարտատէրերի օգուտների վրա: Միւսը Կ. Պօլսի մի անյայտ հեղինակից գրված, հրատարակված է ֆարիզում: Այս վերջինը որի վերնագիրն է «Solution de la question d'Orient» (Արեւելեան խնդրի լուծումը) գրված է կօնգրէսից առաջ, այն նպատակով որ բարոյական ներգործութիւն ունենայ կօնգրէսի անդամների վրա: Բրոշյուրը այն միտքն է յայտնում, որ Թիւրքիան անընդունակ է պետական կեանքին և որ անպատճառ հարկաւոր է Թիւրքիայի թէ եւրօպական և թէ ասիական քրիստոնեաներին լայն ինքնավարութիւն տալ: Միջոց տալ նրանց քաղաքական կեանքով ապրելու: Խմբագրութեան կամքին եմ թողնում, իր ընթերցողներին այդ գրվածքների բովանդակութեան հետ ծանօթացնելու համար, կամ քաղաքական անել այդ բրոշյուրներից, կամ ամբողջութեամբ թարգմանել նրանց:

Ինչպէս ձեզ արդէն յայտնի է, կօնգրէսը վերջացրեց իր պարագլուխները և խաղաղութեան դաշնագրութիւնը ստորագրեցաւ: Երբ որ, հայտնի լինի զինուոր ժամանակ, հայոց զէնքատներից պահանջեցին կարճ «formule» (ձևակերպութիւն) իրանց պահանջների մասին, նրանք տուեցին հետեւեալ ձևակերպութիւնը:

«Հայաստանի կաղճակիկները իրանի օրինակով, մի հայ վալիի կառավարութեամբ, համեմատ եւրօպական մի յանձնաժողովից մշակված կանոնադրութեան: Եւրօպական այդ յանձնաժողովին յանձնված կը լինի հսկել և կանոնադրութեան կատարման վրա»:

Այդ էլ ընդունվեցաւ կօնգրէսից, որովհետեւ այդ միջոցին յայտնվեցաւ Անգլիայի և Թիւրքիայի մէջ առաջուց կապված պայմանը, որ կօնգրէսը որոշեց իր քննութեան տակ չը գցել:

Անգլիական լիազօրները հայոց խնդրի մասին կօնգրէսի մէջ խօսելու ժամանակ յայտնեցին թէ «արդէն բաւական վիճաւ տրվեցաւ Թիւրքիային և ուրեմն աւելի լաւ կը լինէր հայերի խնդրի իբրեւ վարչական ինքնավարութիւն (autonomie administrative) թողնել: Այն ժամանակ կօնգրէսը որոշեց ընդարձակել Սան-Ստեֆանօյի 16-րդ յօդուածը այս կերպով, մտցնելով նրան Բերլինի դաշնագրութեան մէջ. «Յօդ. LXI. Բ. Գուռը պարտաւորվում է իրագործել անյողաղ այն բարեկարգութիւնները և վերանորոգութիւնները (réformes), որոնք անհրաժեշտութեամբ պահանջվում են հայերից բնակեցրած նահանգներում, և ապահովել քրիստոնեաներին չէրիէզների և քուրդերի դէմ: Բ. Գուռը պարտաւորվում է տեղեկութիւն կը տայ իր ընդունված միջոցների մասին այն պետութիւններին, որոնք կը հրահանեն այդ վերանորոգութիւնների գործադրութեան վրա»:

Կօնգրէսի բոլոր անդամները և ազգերի զէնքատները արդէն հեռացան Բերլինից: Այսօր խոսքն արեւելակիւպոսը և պ. Ս. փախաբեան ճանապարհ են ընկնում դէպի ֆարիզ և Լօնդօն, իսկ վաղը կամ միւս օրը Երուսաղէմ քաղաքը իր քաղաքաւոր պ. Մ. Չեքալի հետ ուղևորվում է Կ. Պօլսի վիլենայի վրայով:

Պարսկաստանի դեսպան Լոնդօնում, հայազգի Միքա Մէլքում խանը, որ ներկայացաւ կօնգրէսին պարսից տէրութեան կողմից Կօտուր երկիրը ստանալու համար, այս օրերս այցելութիւն գործեց Երուսաղէմ և Երաբէլ սրբազաններին, որոնց մօտ եւ առիթ ունեցաւ ծանօթանալ նորա հետ:

Ա. Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինից յուլիսի 10-ին հեռագրում են եւրօպական լրագրիչներին հետեւեալը: «Կօնգրէսը վերջացրեց ֆոքր-Ասիայի սանձանքների որոշելը: Ուլտին միում է առանձնեցին, բաթումը կը լինի վաճառականական ազատ նաւահանգիստ: Կօնգրէսը քննեց նաև հայերի պահանջները, որոնց Բ. Գուռը բաւականութիւն պէտք է տայ: Թիւրքաց նահանգներին առանձնեցի մաքրվելու հարցը քննվեցաւ, բայց թողնեցաւ խմբագրական մասնաժողովին որ փոփոխի պայմանաժամի թւական եթէ հարկաւոր է»:

—Փարիզից յուլիսի 10-ին հաղորդում են «Indépendance Belge» լրագրին որ ֆարիզի յոյն դաշնականութիւնը դօկտօր Մէտակասի ինքնակառավար ներկայացրել է պ. Գամբետտային ազգային երախտագրութեան մի ուղերձ (ադրէս) այն նշանաւոր ծառայողներին համար որ արած է յունական դատի պաշտպանութեանը: Պ. Գամբետտա սաստիկ յուզված, յոյս է յայտնել որ իր գործը կը կատարվի մօտ ժամանակում, որովհետեւ, աւել է, յոյն ժողովուրդը զԷլիսաւոր տարածողն է քաղաքակրթութեան արեւելքում:

—«National Zeitung» լրագրին ֆարիզից հեռագրում են յուլիսի 14-ից հետեւեալը: «Այսօր տեղական լրագրիչներում տպված է Բերլինի խաղաղական դաշնագրութեան բնագիրը: Անգլո-թիւրքաց դաշնագրութեան առիթով յաւուրացված յուզմունքը դեռ ևս չէ դադարել: Այստեղ շատ են խօսում այն վարձատրութիւնների մասին, որ պէտք է ստանան Ֆրանսիան և Եւրոպան: Հաւատարմում են որ Տրիպօլին կընկնի իտալիային, իսկ Տունիսը Ֆրանսիային»:

—«Presse» լրագրում հեռագիր է տպած Հոսմից, որի մէջ հաղորդվում է որ իտալական միջնորդութիւնը խնդրում է թագաւորից կարճացնել իր Տուրինում մնալը և շտապել վերադառնալ Հոսմ, որովհետեւ թէ Հոսմում և թէ բոլոր իտալիայում Կիպրոս կղզու հարցի առիթով առաջացած յուզմունքը առաւել ևս մեծանում է: Ասում են, կառավարութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ անգլիական դեսպանատան առաջ պատրաստվում են թշնամական ցոյցեր և որ կառավարութիւնը միջոցներ է գործ դրել արգելելու այս բանը: Միջնորդների խորհուրդը վաղը կը քննի Լէվանտի ջրերում նաւատորմ ուղարկելու հարցը:

—«Port» լրագիրը իմացաւ, որ գերմանական կայսրը հաստատ ցանկութիւն յայտնեց, եթէ միայն կարելի կը լինի անձամբ բաց անել գերմանական պարլամենտը:

—«Голосъ» լրագրին Բերլինից հեռագրում են յուլիսի 6-ին (18-ին), որ իշխան Գորչակով ճանապարհ ընկաւ այսօր Պետերբուրգ: Իշխան Բիսմարկ իր ամուսնի և աղջկայ հետ, երէկ երեկոյան հասաւ Կիւսնիգէն, որ նրան փառաւոր կերպով հանդիպեցին:

—Բերլինից հաղորդում են «Times» լրագրին հետեւեալը: Կօնգրէսի յուլիսի 9-ի նիստում հարց առաջարկվեցաւ թէ կօնգրէսը քննարկելու մտադիր է գործադրել տալ իր որոշումները: Խոսան Բիսմարկ ցոյց տուեց թէ քանի որ տէրութիւնների շահերը այսպիսի տարբեր են, ամենքը միասին ժողով կազմելով հոկել անկարելի է: Կօնգրէսը որոշել է որ ամեն տէրութիւն յանձնարարի իր դեսպանին և հիւպատոսներին Թիւրքիայում որ հսկին իր շահերին պատկանող պայմանների գործադրութեանը:

—Համայնքների խորհրդարանում յուլիսի 11-ին պ. Ստանիլ յայտնեց որ Մայնպոլս գտնված հնդկական յօդքերը և երեք վաշտ անգլիացի հետեակ զօրքեր որոնց ամբողջը լինում է 10,000 մարդ, կը գրաւեն Կիպրոս կղզին:

—Կ. Պօլսից հաղորդում են յուլիսի 12-ին որ Կիպրոս կղզում հողերի գները քանի անգամ աւելացել են այժմ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԳ, 14 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ռ., երկրորդ 96 ռ. 25 Կ., երրորդ 95 ռ. 75 Կ., չորրորդ 95 3/8 ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 236 ռ., երկրորդ 235 ռ. 50 Կ., արեւելեան 94 3/8 ռ., ոսկին 7 ռ. 77 Կ.: Տրամադրութիւնը թոյլ է: Մասնաւոր դիսկոնտ 4%—5%:

ԲՈՒԹԱՐԵՍ, 12/24 յուլիսի: Ռուսները պատրաստվում են մաքրել Նասաի: Նոքա թողնում են Ծօկչանի շրջակայները և ուղևորվում են դէպի Պոնտօլի:

ԲԵՐԼ, 12/24 յուլիսի: Երէկ հասան այստեղ Ֆրանսիական չորս զրահաւոր շոգնաւեր և մի բերնակիր նաւ: Այդ հանգամանքը աւելացրեց Յունաստանի բարեկամական հակամի դէպի Ֆրանսիան:

ԼՕՆԴՕՆ, 13/25 յուլիսի: Պարլամենտի նիստերը կը վերջանան օգոստոսի 8-ին:

Յ Ե Մ Ե Ս Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ն Ն Ե Ր

Ինչ յանձնված լինելով ԱՊՐԻԼԻՍԻ ԵՐ-
ԱՍԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐ-
ժԱՊԵՏՆԵՐ փայտեղ, խնդրում եմ ցանկա-
ցողներին պայմաններին մասին խոսելու դիմել
ՄԵՍԿԻՄ խմբագրատանը. իսկ օտարաշա-
ղաքացիք կարող են իրանց ցանկությունը
յայտնել նամակով: Անյարմար համարվածնե-
րն չեն պատասխանվի:

Յ. ՄԵՍԿԻՄ-Յակոբյանց

Վերին-Աղուլիսի երկու զարդաների հա-
մար պահանջվում է երեք վարժապետ, ա-
ռաջինը ռուսաց լեզուի համար, երկրոր-
դը թուրքալեզուի համար, իսկ եր-
րորդը աշխարհագրության, ընդհան-
րապես պատմության և բնական գի-
տության համար: Ծանկացողները կարող
են դիմել միջակի խմբագրատանը պ. ՄԵՍԿԻՄ-
Յակոբյանցի մոտ պայմանների մասին խոսելու,
որը յիշեալ զարդաների հոգաբարձության
կողմից, այս իսկ յանձնարարությունը ուղար-
կված է Թիֆլիս:

Հոգաբարձու Միխայիլ Արստանյանց

Հարկատու են խոստովանում և ուսու-
ցիչ, իւրաքանչիւրը երեք տարակալի համար
հայտը և ուսաց լեզուների ու թուրքալեզու-
թիւնը: Պայմաններին մասին կարելի է խմբակ-
ային ձևով խոսելու Տէր-Յակոբյանցից:

Օգնական թեմական տեսչի Աւետիք Տէր-
Յակոբյանց:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴԱՆՈՑԻ
ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ յայտում է, որ Բաղադային
բժշկական հիմնարկությունների կանոնադրու-
թեան բժշկական բաժնի կանոնների 83 հա-
մաձայն հիմնարկները ընդունվում են հի-
մնարկացույցում ամեն օր ամառ 7-ից, իսկ
ձմեռ 8-ից մինչև 10 ժամը, բացի այն դեպ-
քերից, երբ ընդունելությունը չէ կարելի յի-
տազել:

2-3

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆ-
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Ժամկետով են ՍՊԵՏԱԿ
ԲՈՒՄՍՉԵՑԱ ղեկավարականները չորերի համար
արշինը 1 ռ. և բարձր, ՈՒՆԵՍԻ չորերի հա-
մար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 Կ. ՓՕՇԵՆԵՐ
տարածական հիմնարկությունների գեղ և ԽԻՆԱՅԻ
ԲԱԼԶԱՄԵՆ (ԽԵՂ) 1 1/2 ռ., ՍԱՊՈՆ 10 Կ. և
բարձր, ՅԻՏՐԱԿ ամպանցի 1 1/2 ռ., ԲԵՍԱԿԻՏ-
ՆԵՐ 1 ռ., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ռ., Կը-
կաթեայ մանձնակաշնե 5 ռ. և բարձր, սղոցներ
50 Կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆԵՐ զեւթներ
3 ռ., ԳՐԻՉԵՆԵՐ արքա 15 Կ. և բարձր, ՌԵՎՈԼ-
ՎԵՐՆԵՐ 6 ռ. և բարձր 1000 անոթ 80 կոպեկ,
պլան ԲԱՄԲԵՐ 40 ռ. և բարձր, ԻՊԱԿԱՆ-
ԵՐՆ 70 ռ. և բարձր, ծածկոցներ, մակնիտոյներ,
երեխաների չորեր 4 ռ. և բարձր, հիւսնալի վե-
ւեր 12 ռ. և աւելի, վերականգնող ՄԱԿ-
ՄԱՍՏԵՐ 2 ռ., կողպեղներ և պոչսաններ 10 Կ.
և բարձր, բով, կոնեակ, պորտ-վեյն, խերես և
անգլիական օղի 1 1/2 ռ., ՊԱՆԵՐ չեստեր 60 Կ.
և բարձր, Շուտով կը լինի լաւ թէյ 1 ռ. ֆուտուր:

15-20

ՀԱՐԱՔՈՒՄ ԵՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՆՈՒՆԵՐ
որոնց նշանակությունը և արժանաւորու-
թիւնը մեր ազգի համար մանրամասն կը բա-
ցատրուի իր ժամանակին: Առ այժմ 300-ի
չափ հաւաքած ունեւորով դիմում եմ դէպի
մեր բանասերները խմբագրատան խնդրելով
աւելի մօտ ծանօթալ ժողովրդի հետ, նրան-
ցից հաւաքին և ուղարկին ինչ մանաւանդ
բուն աղբային հանելուկները, որոնց հետ
պէտք է լինի Հանելուկների ԴՈՒՍՐ ԲԱՌԵ-
ՐԻ ԵՒ ՄՏՔԻ ԲԱՅՏՐՈՒԹԻՒՆԸ: Աշխատու-
թիւնը չը խնայեցողների անուն և ազգա-
նունները կը տպագրուին զբոսում և կողար-
կին նրանց համար մի մի օրինակ ձրի:

Գրիգոր քահանայ Մանուկյան:
Իմ հասցեն Թիֆլիս. Ավաօար. ՏԵՂԻ-
ՇԵՆԻԿՍ ԵՐԵՂԵՐԻ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ:

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆԻ

ՀԱՏ ԷՃԱՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՉՈՎ ԵՆ ՏՐԿՈՒՄ

ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Երևանայ տուր ԳԱՅԵՆԵՆԵՆ ՕՐԻՈՐԻՆՑ ԴՊՐՈՑԻ
երեք դասատան համար հարկաւոր են մի ՈՒՍՈՒՑԻՉ շաբաթա-
կան 24 դասով ռուսաց լեզուից երկրորդ դասարանում, թաւրանու-
թիւնից, աշխարհագրութենից և ընդհանուր պատմութենից, և մի
ԿԱՐԳԵՐԱՆ ՎԱՐՉՈՒՆԻ շաբաթական 16 դասով ռուսաց
լեզուից պատրաստական և առաջին դասարանների և ձեռագործու-
թեան համար իւրաքանչիւրը տարեկան 500 ռուբլ. ռոճիկով. ցան-
կացողները թող շապտեն յայտնել զարդի տեսչութեան այս հաս-
ցեով. — ВЪ Эривань Протоіерейю Іосифу Мелянцу.

3-3

КОНТОРА ГАЛЛЕРИИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМЪ ВОСКРЕСНЫХЪ

ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆԻ ԴՐԱՄԵՆԵՆԿԸ

ԲԱՏ ԷՃԱՆ ՕՐ ԵՌԵՐՈՏԵՆԵՆ 9 ժամից մինչև 2 ժամ

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից:

ԹԻՖԼԻՍԻ 15:

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	Բ.	Կ.
(Յուլիսի 14-ին)		
Ոսկին (պոլումպերիւր)	8	5
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—
Հին 20 Կ. 72 պր. 1000	1300	—
Վերջինի 50/0 առաջի փո- խառնութեան տուր. 100	233	—
Երկրորդ 50/0 վերջինի	235	—
Մարտիկի կոտոր 237	100	—
Լոնդոնի կոտոր 0 ղեւայի վրա	10	67
Վերայի կոտոր ամէ 112 ղ.	121	—
Ղաւթի միւս տեսակը	5	90
Առեւտրական բանկի ակ- ցիան 200 մ.	300	—
Փոփի թիֆլիսեան երկա- թուղու ակցիան 125 մ.	125	—
Հաւաք բոցիկու	7	80
Միւս տեսակը	7	70
Հաւաքաւոր	6	20
Մարտիկու	6	50
Մարտիկ վարած	12	—
Բաժնակիր Երևանու Ա- մերիկայի սերմից.	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրգը Թուրքի	8	—
Քարաքամի	4	20
Աւելի Զորագաւուր	1	40
Երևանի	—	—
Գարին	1	20
Մ. Մ. Բ. Բնաւորայի (сгар.)	13	20
Մեծաւոր Նուրայի	180	—
Կախի թիւնը	100	—
Կոկոնը Նուրայի (բով.)	45	—
Ճորձոնը (լաւը) Ազու- կաց	55	—
Կոֆէն մօկի	27	—
Կոֆէն	22	—
Մարտիկիւնը	20	—

ՀԵՆՈՒԳԻՐ	Բ.	Կ.
Կովկասի և Ան- դրկովկասի քա- ղաքները	1	—
Ռուսաստան	2	—
Աւստրիա	3	—
Անգլիա	4	—
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ՄԱՆԱ- ԼՈՒՄ	ԵՐԵՂԵ- ՐԻՆ
ԱՆԴՐԱՎՈՎԱՍՏԱՆԻ ՄԱՆ- ԿԱՐԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑ	
(Վերայի վրա № 38)	
Մանուկաների ընդհա- նելութիւնը ցերեկայ և գիշերային ամեն ժամա- նակ, օրը 50 կոպեկ վար- ձով, իսկ չաւորներին ան- վարձ: Առանձին սենեակ- ներում ամիսը 30 — 50 րուբլ: Կանանց հի- ւանդութիւններին բաժանմունքը մէկ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սե- նեակներում 30 րուբլ ամ- սական:	
Երթեկի հիւանդ կա- նանց և երեխաների ըն- դունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9 1/2 մինչև 11 ժամ առաւո- տեան: Բժշկացի Ա. Կ- նով.	

ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԱՆ ԵՐԿԱ- ԹՈՒՂԻ	Բ.	Կ.
Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամի 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայիլով (խառն գնացքը) երկուրորդ 5 ժամ. 13 րոպէ:		
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գորի	11. 58	9. 43
Միխայիլով	1. 29	11. 57
Քիւն	6. 47	—
Փոթի	9. 40	—

ՓՕՍ	Բ.	Կ.
Ամեն տեսակ թէ նա- մակներ, թէ քաղցրեղեն և թէ ծանր փոստ ամեն տող ուղարկելու, ընդունվում են ամէն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասա- րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երեկոյեան.		
Ռուսաստանից և Արտաստանից փոստը փոստը ստացվում է Թիֆ- լիսում ամեն օր: Բա- զուի տրակտից երե- շաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից եր- կուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փոթի-Թիֆլի- սեան երկաթուղուց ամէն օր: Նուրայի տրակ- տից չորեքշաբթի և կի- րակի: Բելիկիւնի տը- րակտից երեքշաբթի և շա- բաթ.		

ՆԱՄԱԿՆԵՐ	Կօպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւ- րոպայի բոլոր երկր- ները նամակը արժէ .	8
Սօվիտ	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս . . .	27

ԹԻՖԼԻՍ 1878	Կօպ.
Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:	
Երկուշաբթի. վերմի- չէվ և Գորայիկի ներքին հիւանդութիւններ, Գուրա- րեանց վիրաբուժական և ակաւիքի հիւանդութիւններ:	
Երեքշաբթի. վերմիչէվ ներքին հ. Բէյլի աչքի հ. 9-11 ժամ, Ա. Բախու- տով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան:	
Չորեքշաբթի. վերմի- չէվ ներքին հ. Բախու- տով կանանց և զղային:	
Հինգշաբթի. վերմի- չէվ ներքին հ. Գալիլոյի հիւանդութիւններ և մանկա- բարձութեան, 9-10 ժամ, Բախուտով կանանց և կա- նանց հ. Օրբէյի առաւան- ցաւոր:	
Ուրբաթ. վերմիչէվ ներքին հ. Բախուտով ման- կաբարձութեան, կանանց և երեխաների հ. Գուրաբեանց սիֆիլիսական և միզային գործարանների հ.	
Շաբաթ. վերմիչէվ ներ- քին հ. Բէյլի աչքի հ. Բախուտով կանանց և զղա- յին հիւանդութիւններ:	